

մնաց խենջարս, որ նոյն ակնթարթում խրոնեցաւ դաբանի կողքում: Նա արծակեց մի սարսափելի հառաչանք, բայց դարձեալ չկորցրուց իր զօրութիւնը: Նա փորձ փորձեց գործ դնել իր դուրս ցցոած ժանիքները, բայց հարոածն անցաւ անյաջող, որովհետեւ ես կայծակի արագութեամբ մի սաստիկ թռիչք գործեցի դէպի գազանի գաւակը, եւ նոյն րոպէում խենջարիս երկրորդ գարկը խիստ խորին կերպով անցաւ նորա փորի մէջ: Նա դեռ սարսափելի ընդդիմադրութեան պատերազմում էր: Այդ մահու եւ կեանքի զարհուրելի տագնապի միջոցին, ինձանից ոչ այնքան հեռու, որոտաց մի հրացան. գնդակն անցաւ ուղղակի որսի գլխի մէջ. վիթխարին մի քանի անգօր շարժումներ գործեց եւ գլորեցաւ գետին...

Ես ետ նայեցայ, տեսնում եմ՝ Մարօն, հրացանը ձեռին, հեռու կանգնած, ժպտում էր...

Ո՛վ կարող էր պատմել իմ ուրախութիւնը: Ես բոլորովին թաթախտած արեան մէջ, վազեցի նրա մօտ, եւ գրկելով իմ ազատիչը, պի՛նդ ճշշեցի քաջազնական կուրծքը իմ սրտի վրա...

Մարօն պատմեց, թէ բաժանելով ինձանից, նա իսկոյն չդարձաւ դէպի գիւղը, այլ բարձրանալով «Ծակ-քարի» գլխին, այնտեղից հետազօտում էր իմ ուղեւորութիւնը: Նա տեսաւ, դեռ ճանապարհի կեսը չհասած, ես խոտորոցայ ուղիղ շաւիղից, որ տանում էր դէպի Խանա-սորի ձորը: Նա իսկոյն վազեց իմ ետեւից, միգուցէ ես բոլորովին մոլորուէի լեռների մէջ: Մի քանի ժամ նա կորցրեց ինձ իր տեսութիւնից, եւ երկար որոնելով, կարողացաւ գտնել այնտեղ, ուր յայտնուեցաւ դաբանը: Նա շատ անգամ կանչեց ինձ, զգուշացրեց, բայց ես տաքացած լինելով պատերազմի խռովութեան մէջ, չկարողացայ լսել նրա ձայնը: Եւ իմ առաջին անյաջող նետումից յետոյ, երբ ես մի կողմ ձգեցի հրացանը եւ պատրոնը, նա օգուտ քաղեց այդ դէպքից, իսկոյն լեցրուց հրացանը նոյն պատրոնով, իսկ հետեւանքը՝ արդէն յայտնի էր:

Այս խօսակցութեան միջոցին մենք չէինք նկատում, որ չորս հոգի կանգնած բլուրի գագաթին, դիտում էին այն տեսարանը, որ հանդիսացաւ քանի րոպէ առաջ: Նրանք մօտեցան մեզ. մեկը որսորդ Աւօն էր, միւս երեքը՝ իմ ընկերներն էին: Ծերունին առեց իւր գրկի մէջ ինձ եւ իր դուստրը, համբուրելով ասաց.

— Դուք երկուսդ էլ արժանի էք որսորդ Աւօյի որդիք կոչելու...